

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՆՃ.
Պաշտոնաց 40 ՄՆՃ.
վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 ՄՆՃ.
Պաշտոնաց 5 ՄՆՃ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սահմանափակ չկը-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օրինանիշի կողմը տրուած պատե-
րադմաց վրայ տակաւին պաշտօնական
տեղեկութիւն չհրատարակեցաւ. Ռու-
սաց պաշտօնական մէկ հեռագիրը կը
ժանուցանէ թէ Կոստանթնուպոլիս
հրամանաց ներքեւ գտնուող զօրքը
թէլիքի վրայ յարձակելով գրաւեր են,
և հոն գտնուող Օսմանեան զօրքն որ
քանի մը վաշտէ կը բաղկանար անձ-
նատուր եղեր են. իսկ ասոնց հըրա-
մանատար Հաֆէի փաշան և իւր ըս-
պայներն ամրոյցի մը մէջ են եղեր,
ուրիշ Ռուսք զիրենք աղատ պիտի
թողուն մեկնելու ։ Հինգշաբթի իրի-
կուն կը զրուցուէր թէ Շէվքէթ փա-
շայէն յաղթական հեռագիր մ'եկեր
է, որ եթէ հրատարակի, պարունա-
կութիւնն 'ի ներքոյ կը ժանուցանենք ։

Սիւլէյման փաշա հոկտ. 16 թը-
ւով կը հեռագրէ թէ Ռուսաց մէկ
զօրագունքն Եւուփան-Չիքիթիկի մեր-
ձակայ բլրոց վրայ հետադատութիւն
մ'ըրեր է ։ Սիւլէյմանի կողմը Ռուսք
գէտ 'ի Գոզլուէ գիւղը կը յառաջա-
նային ։ Սիւլէյման փաշայի հոկտ. 17
թուով մէկ ուրիշ հեռագիրը Ռուսաց
նոր անգթութեան գործերը կը պատ-
մէ ։ Գարա-Փուշնար գիւղին իսլամ'ը-
նակիները թշնամեոյն բռնութեանց
չկրնալով հանգուրժեթի թանթուր գիւ-
ղին ապաստանէր էին, ուրիշ ալ յիշ-
եալ գիւղին բնակչաց հետ 'ի միասին
կը գաղթէին ։ Ռուսաց զինեղէն գուրս
երկերու համար ։ Հազիւ ճանապարհ
կրած էին, Ռուսաց զօրքերը հասեր
Խամբուլին կրակ ըրեր են՝ առանց կա-
նայքն ու մանկունքն իսկ խնայելու ։
Գիւղացիներէն հազար հոգի չափ փա-
խեր և Գոզլու պէյ գիւղին հասեր են,
բայց չէին գիտեր թէ մնացած գիւ-
ղացիք ինչ եղած էին ։ Ասոնցմէ 222
կին և 3 մարդ Օսմանեան բանակը
հասեր լուր տուեր են թէ թշնամին
այս օրերս Հային-Պոզաղիի կողմը բա-
ղամ' զօրք կը համախմբէ ։ Ռուսական
ուրիշ անգթութիւն մ'ալ Սթանտար-
տի թղթակիցը կը պատմէ՝ Արտահա-
նի կողմերն ուղեւորելով ։ Համոն է-
ֆէնտիկ ըրած արշաւանաց ժամանակի
Տէտէճան անուն մեծ գիւղի մը տու-
ներն ու միկիթներն այրեր կամ փա-
ռօգով քանդեր, և տուններուն կահ
կարասիքն՝ ինչպէս նաև խաչինքն ա-
ւար աւեր էին ։ Գիւղացիներէն քը-
սան և մէկ հոգի սպաննուեր են, ու-
րոյ մէջ երկու մանկանց լեղունքը
գուրս հանուելէ ետեւ գլուխները կը տ-
րուած էին, վասն զի ասոնցմէ մին
Ռուսաց զօրքը գրեթէ ամեն ալ գի-
նով վիճակի մէջ գիւղը մտած ժամա-
նակ «Մօսքով» անուաներ էր զանոնք ։
Գուցէ Ռուսաց Սիւլէյմանի կողմը նոր ար-

շաւանքն աւելի մեծ անգթութեանց
առիթ տայ ։ Ռուսաց հեռագիրը կը
ժանուցանեն թէ Հէյման և Տէր Գու-
կասով զօրավարները Կարնոյ կողմը
կը քալեն, իսկ Լէվընթ Հէրլուի խօս-
քին նայելով Կարնի Մուսթաֆա փաշա
և իսմայիլ Հաֆէի փաշա, որք կար-
նէն վեց-եօթն ժամ հեռու քէօքըրի-
քէօյ միացած էին, խոհեմութիւն հա-
մարած են եղեր Կարնոյ ամրութեանց
ներքեւ քաշուել և եթէ թշնամին յար-
ձակելու փորձ փորձէ, զօրեղ գիւմա-
գըրութիւն մ'ընել ։ Կարս կը գիւմադ-
րէ, և տակաւին չգիտցուի թէ արդ-
եօք Ռուսք կը յայն ամրոյցապէս
պաշարել ։ Իրենց բանակի կեդրոնը
Կարսի առջև Վիլիքն քէօյ է, ուր կը
գտնուի նաև Միքայէլ Մեծ գուրքը ։

Ռուսաց Նիկոպօլսոյ առջև գրա-
ւած Օսմանեան երկու փոքր զրահա-
ւոր նաւերը նորոգուեր և պաշտօնա-
պէս Ռուսաց նաւատորմին արձա-
նագրութեանց մէջ անցեր են Նի-
կոպօլիս և Ջիշթով անուններով և
Գանուրի վրայ Ռուսաց հաղորդակ-
ցութիւնները պահպանելու կը գոր-
ծածուին ։ Բեդրասպուրի մէջ՝ Աւստ-
րօ-Հունգարական կառավարութեան
հունգարացւոց ուսանց Ռուսաց հա-
ղորդակցութիւնները կտրելու գիտ-
մամբ Ռուսմանիա արշաւելու փորձը
բռնուն զօրութեամբ արգելուին ապա-
ցոյց կը համարին թէ Վիէնայի ար-
քունքն հաւատարմ' պիտի մնայ ե-
րկոյ կայսերաց դաշնակցութեան ։
Ռուս լրագիրք իրենց պատերազմա-
կան կորուստներն յիշուներկու հա-
զար հոգի կը հաշուեն մեռեալ ու
վիրաւոր, և Կօրս լրագիրը կըսէ թէ
վերջին պատերազմաց մէջ եղած կո-
րուստներն երեք զօրաբանակի կը
հասնին, որ 'ի սկզբան Ռուսմանիա
անցնող զօրաց թուոյն հաւասար է ։
Բոլոր Ռուսաց քաղաքները վիրաւոր-
եալներով լի են, և կառավարութեան
ու ջեմիթիօ կոչուած թաղապետա-
կան ժողովոյ օգնութիւնները բաւա-
կան չգալով, հազարի չափ մասնա-
ւոր ընկերութիւններ ալ կազմուած
են, որոց տարեկան երկու մուտքը մէկ
միլիոն երեք հարիւր հազար լուսլի
կը հասնի ։

Եւրոպական քաղաքականութիւ-
նը գեռ կը ննջէ, և թէպէտ միջնոր-
դութեան զրոյցներ կը լսուին, բայց
տակաւին զօրաւոր չեն ։ Անգղիոյ
թղթատարութեանց նախարար Լորտ
ճօն Մաննըրս անցեալներն ատենա-
խօսութիւն մ'ընելով ըսաւ թէ ներ-
կայ պատերազմին սկիզբն Անգղիոյ
նախարարութիւնն յայտարարեց թէ
այս պատերազմն օգտակար և պիտա-
նի չէ. ուստի Անգղիոյ կառավարու-
թիւնն ամենէն աւելի կը փախալի
հիմա առաջին նպատաւոր առիթ

մը ներկայացած ժամանակ դոհացու-
ցի պայմաններով պատերազմին վերջ
տալու համար միջամտել. բայց այս
նպատակը պարագայն ե՞րբ պիտի
ներկայանայ, այս մասին բացատրու-
թիւն տալ առ այժմ յարմար չգտնեց ։
Սակայն Եւրոպական վերջին լրագրաց
խօսքին նայելով, Անգղիոյ կառավա-
րութիւնը խաղաղական միջնորդու-
թեան մը համար բանակցութիւն բա-
ցեր է միւս մեծ տէրութեանց հետ,
բայց յաջողութիւնն առ այժմ խիստ
երկբայելի կը թուի, որովհետեւ
միւս տէրութիւնք բարոյիկն լուռ
կը կենան և ասպարէզը Ռուսիոյ կը
թողուն ։ Խաղաղ երեսփոխանական
ժողովին նախագահ Պ. Քրիսթի Պէր-
լին և Վիէնայի ուղեւորելով Բէշթա
հասաւ, ուրիշ ալ խաղաղ պիտի վե-
րադառնար ։ Պ. Քրիսթիի ուղեւորու-
թեան վրայ զանազան զրոյցներ լսուե-
ցան, որպէս թէ Գերմանիոյ և իտա-
լիոյ մէջ նոր դաշնակցութիւն մը պի-
տի հաստատէ ։ Պիտերներ եղան նա
և թէ Պ. Քրիսթի Աւստրիոյ զնապու-
րապետն էր ։ Երբեք մեծ ջնջելու միջոցներ
կը խորհի, Թրիէստէ և ուրիշ խաղա-
րէն խօսող գաւառներն իտալիոյ հետ
միացնելու յոսով. բայց Պ. Քրիսթի
Վիէնայի և Բէշթա ուղեւորութիւնն և
հոն գտած սիրայիլ ընդունելութիւնն
այս զրոյցները կը ցրեն ։ Հիմա ալ լը-
րագիրք ուսման կը ժանուցանեն թէ
Պ. Քրիսթի Արևելեան խնդրոյն կար-
գազրութեան միջոցին իտալիոյ հա-
մար ալ բաժին խնդրեր է. բայց այս
զրոյցն ալ աւելի երեւակայութեան ար-
գիւնք է քան թէ իրականութեան ։
Ստոյգն այս կերեւի որ Պիտ թ. Պա-
պը խոր ծերութեան մէջ և վախճա-
նին մօտ ըլլալով, յաջորդ Պապին ընտ-
րութեան ժամանակ Անգլիայեանա-
կանաց ազդեցութիւնը ջնջելու հա-
մար միջոյ մը խորհիլ հարկ ըլլալով,
Պ. Քրիսթի այս մասին Պ. Պիտարքի
հետ բանակցել ուղած է, քանզի
թէ իտալիոյ և թէ Գերմանիոյ շահը
կը պահանջէ որ Պիտ թ. ի տեղ անդ-
րալեւնական Պապ մը չընտրուի ։

Գաղղիական Գոնսթիթիւսիօնէլ
լրագրին Լոնտրայի թղթակիցն հոկտ.
19 թուով հետեւեալը կը գրէ ։

« Լորտ Տէրպիլ, արդարը խօսելով
անկեղծաբար և պարկեշտաբար ան-
հնարին ջանքեր կընէ իւր միջնորդու-
թիւնն ընդունել տալու համար ։ Ար-
տաքին գործոց պաշտօնատան մէջ
ամենագովելի փութաշնութիւն մը
կայ ։ Աւստրիոյ գեապան Պայսթ կոմ-
սին ոչ դուր կը տրուի ոչ դադար ։
Գերմանիոյ գեապան Միլենսթէր կոմ-
սը գեռ Լոնտրա չհասած, Պայսթ
կոմսին միտքը գրաւել կուզուի ։
« Լորտ Տէրպիլ կուզէ մինչև երկու
շաբթի առաւօտ (Միլենսթէր կոմսին

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գացած լրագրաց ճանբու-
ծ ախբը խորագրութեան վրայ է ։
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրուի ինչ խորագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Վաղա-
թիա Սանտրքճըլար Հատուսի թիւ
198, Նօրո խան, Մասիսի գրասեն-
եակը ։
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր ։

գալու օրը) Պայսթ կոմսին հետ վերջ-
նական կերպիւ համաձայնիլ ։

« Պատերազմէն առջի վիճակն Անգ-
ղիոյ կառավարութեան առաջարկած
միջնորդութեան հիմն է ։ Ինքնագրե-
լով թէ Ռուսիա և Գերմանիա այս
պայմանն ընդունին, Դրան քրիստոն-
եայ հպատակաց համար երաշխաւո-
րութեան խնդիրը կը մնայ ։ Հետեւ-
եալ ար Գերմանիոյ Գերմանիոյ
վերջին նստին մէջ որոշուած կէտին
վրայ կուգայ կը յանգի խնդիրը ։

« Թուրքերը կը հաստատեն թէ
Օսմանեան Գահմանագրութիւնն ե-
րաշխաւորութիւն մ'է և թէ ուրիշ
երաշխաւորութեան պէտք ունեցող
չկայ ։

« Անգղիա՝ որ կանխաւ գիտէ թէ
Սուլթանը չպիտի ընդունի, չուղեր
այդ ծանր պատասխանատուութիւնը
միայնակ իւր վրայ առնուլ ։ Իսկ եւրո-
պական երաշխաւորութիւն մը ծաղ-
րական է՝ երբոր այնչափ տարբեր շա-
հեր կրնան մէկ օրէն միւսը մեծ տե-
րութիւնները պառակտել ։

« Պէտք է որ Սուլթանը պարզա-
պէս ընդունի Անգղիոյ երաշխաւորու-
թիւնն, որպէս զի Օսմանեան Սահ-
մանագրութեան ժամանակ մնայ իւր
պառաքելը բերելու. բայց այս ա-
մեն ծրագրերն ոչ այնչափ դիւանա-
գիտաց ճարտարութենէն և զօրավա-
րաց ռազմավարութենէն կախումն
ունին՝ որչափ օգտուեն կամահաճու-
թենէն ։ Եթէ ձմեռը սաստիկ ըլլայ
Պոլսոյ վրայ մէջ, Բ. Դուռն իւր գիւղ-
քերը պահելով խաղաղական ամեն
առաջարկութիւնները կը մերժէ ։ »

Մէմօրիալ Տիրքումթիք լրագրին
ալ հետեւեալ տողերը կը հրատարակէ ։

« Վերջին ժամուս կարեւոր լուր
մը կառնուէր ։ Արեւելոյ մէջ զինա-
դադար մ'ընել տալու համար բա-
նակցութիւնը կըլլան Անգղիոյ մէջ
ամենամեծ փութաշնութեամբ ։ Լորտ
Տէրպիլ Նովո-Ռաքէն Լոնտրա եկաւ,
և Թուրքիոյ Աւստրիոյ և Գաղղիոյ
գեապանաց հետ երկարօրէն խորհըր-
դակցեցաւ ։ Իրիկունը նորէն իւր ա-
պարանքը վերադարձաւ ։

« Լորտ Պիտարքիլոյ շաբաթ օրը
Լոնտրա պիտի անցունէ Լորտ Տէր-
պիլի հետ խորհրդակցելու համար ։
Մեծ տէրութեանց գեապանները
Լոնտրա կը վերադառնան ։ Գերմա-
նիոյ գեապան Միլենսթէր կոմսն եր-
կուշաբթի պիտի գայ ։ Արտաքոյ կար-
գի սուրհանդակ մը հինգշաբթի իրի-
կուն Լոնտրայէն Կ. Պոլիս գնաց ։ »

Վիէնայի լրագրերէն ուսման ալ
Կարսի վերջին ճակատամարտին վրայ
խաղաղութեան յոյսերը զօրացած կը
համարին ։ Ռուսիոյ զինուորական պա-
տիւր գոհ ըլլալով միջնորդութիւն
ընելու վայրկեանն եկած է կրտսն ։
Մօրկէնքօսթ լրագիրը կենթադրէ իսկ

Թէ Անգղիա 'ի նպատակ խաղաղութեան ձայնը բարձրացնելու համար այս Եւրոպայի օգուտ քաղել կուզէ : « Գաղափարաւոր , կրէ Գաղափարական թանկ լրագիրն , ինքնապատկան խնդիրը լուծուած չէ : Ռուսք կարծելու չափ յօժարաւորութիւն չեն երևուիր յաղթութիւն մ'ընելուն պէս իրենց ձեռնարկութեանն ետ քաշուելու : Մնաց որ , իրենց մեծ յաղթութիւնն Ասիայ մէջ տարուեցաւ , մինչդեռ զինուորական խնդիրը Բուսթիլի մէջ միայն կրնայ լուծուիլ : Գաղափարաւոր , քանի որ Դանուբեան չորս բերդաքաղաքներն իրենց ձեռքին են , կրնան իրենց գործը վերահաստատելու յոյս ունենալ : Թէ և Դանուբի կողմերը պարտութիւններ ալ կրնն , զոր տակաւին կրած չեն : Միջնորդութիւն մը յաջողութեան յոյս ունենալու համար պէտք է որ մարտնչողներէն մին բոլորովին յաղթութիւն կամ վճարի , կամ թէ երկու կողմն ալ համադուր որ զօրութիւններն հաւասար ըլլալով՝ պատերազմին երկարումը չկրնար վճարական արգիւնք մ'առաջ բերել : Արդ Ասիայ մէջ թուրքաց պարտութիւնն Եւրոպայի մէջ անոնց ունեցած կացութեան վրայ ազդեցութիւն մը չունի , զանոնք վճարուցուած ըլլալու ապացոյց մը չկայ , և Ռուսիա ալ չընդունիր որ զօրութեան հաւասարութիւն կեցած ըլլայ և 'ի վերջոյ ինք կատարեալ յաջողութիւն ձեռք բերելու յոյս չունենայ : Ռուսիան այն յոյսը թէ Հայաստանի մէջ Ռուսաց յաջողութիւնը կրնայ քիչ օրէն խաղաղութիւն յառաջ բերել , բաւական թեթեւ ենթադրութեանց վրայ միայն հիմնուել : Եթէ Բուսթիլի մէջ ալ նոյնչափ կարեւոր յաղթութիւններ հետեւորդ չունենայ : »

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Շէֆֆել փաշայէն հոկտ. 16/28 թուով եկած պաշտօնական հեռագիր մը հրատարակեցաւ , որոյ մէջ ծանուցուած իրողութիւնք արդէն ծանօթ են : Շէֆֆել փաշա կրէ թէ կիրակի օրը Ռուսները մեծ զօրութեամբ միահաղոյն յարձակում ըրին երկու կէտի վրայ : մէկ կողմէ Բլէշլայի մօտ թիւրքի դիրքը պաշտպանող Լիվա Հադգի փաշային զօրաց վրայ և միւս կողմէ Օրխանիէի մօտ Շէֆֆել փաշայի վրայ : Շէֆֆել փաշա ցաւօք սրտի կրծանուցանէ թէ Հադգի փաշային զօրքերը ցրուցան եղեր են : Իսկ ինքը Ռուսաց յարձակումն ետ մղեր է , և հեռագիրը զարկած միջոցին ամուր գրքեր բռնելու զբաղած էր Գարաճա-Տաղի անցքին մէջ Ռատովիչայէն չորսժամ հեռի՝ Օրխանիէի կողմը :

Այս հեռագիրը Գէմէլ-Գէմէլիւնէն զարնուած է :

Կըսուի թէ Շէֆֆել փաշան երկրորդ հեռագիր մ'ալ զրկեր է ծանուցանող թէ Ռուսք չորեքշաբթի օրը կրկին յարձակում մ'ըրեր են իւր վրայ և մեծ կորուստով ետ մղուեր են : հետեւաբար Շէֆֆել փաշա յաջողութիւն Գարաճա-Տաղի բոլոր դիրքերը դրաւել :

Հոկտ. 16/28 յարձակման հըրամանատարներն են եղեր Կուրքօ և Սքօպէլէֆ զօրավարներն :

Պատերէթ լրագիրը կրէ թէ Օրխանիէն Բլէշլայ հաղորդակցութիւնք կարուած են , բայց այս բանը մեծ կարևորութիւն չունի , որովհետեւ Բլէշլայի մէջ առատ սլաշար և ռազմամթերք կան :

Մուսթար փաշայէն պաշտօնական լուր մը չկայ հրատարակուած : Բայց

Շէֆֆել Գաղափարաւոր Մէհմետ Կադի փաշայէն իւր ընտանեաց եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Օրխանեան զօրքերն երկուշաբթի օրը Հաւան-Գալէի հին բերդին մէջ չորսպատուեր են Ռուսաց զօրքերէն , բայց քաջութեամբ Ռուսաց դուռները պատուելով՝ հանրայ բացեր են : Չորջ կայ թէ Ահմետ Մուսթար փաշան կարնոյ մօտ Տէվէ-Պոյնու կուլած անցքին բերանը և ըստ ոմանց ալ կարնոյ բերդերուն ներքե քաշուեր է , ուր Ռուսաց կողմէ նոր յարձակման մը կ'սպասէ եղեր չորեքշաբթի օրը : Վերջապէս կարնոյ առջև նոր ճակատամարտ մ'անհրաժեշտ կերևի եղեր :

Անգղիական թայմզ լրագիրն Կ. Պոլսոյ թղթակիցն հոկտ. 21 թուով յիշեալ լրագիրն զրկած հեռագրի մը մէջ կրէ թէ Մուսթար փաշայի պարտութեան պատճառը Կ. Պոլսէն տըրւած հրահանգներուն անկան չկախուլն է , որք պարզապէս պաշտպանողական դիրք բռնել կը պատուիրէին իրեն , բայց ինքն ընդհակառակն թող տուաւ որ Ռուսք զինքն իւր դիրքերէն յառաջ ձգեցին , և վերջն ալ այս ծանր հարուածը տուին իրեն : »

Ագրիանուպոլսոյ կուսակալ Ահմետ Վէֆիգ փաշան հոկտ. 17/29 թուով կը հեռագրէ թէ Ֆիլիպէէն զօրք զրկուեր է թուրքերի վանքին վրայ՝ մէջի Պուլղար ապստամբները 'նուաճելու համար : Բայց վանքին դիրքը խիտ ամուր ըլլալով , ապստամբք դիմադրեր են , և զրկուած զօրքը տեսնելով որ առանց մեծ թնդանութեան անհնար էր վանքին տիրել , քանի մը ժամ կուռելէ ետեւ ետ դարձեր են :

Ն. Վսեմալթիւնը կը ծանուցանէ նաեւ թէ 200 ի չափ Չէրքէզ հեծեալք Բըզանլըքի մօտ Խաղախ հեծեալքօրաց հանդիպելով՝ զարկեր ցրուցան ըրեր են զանոնք :

Պատերէթ լրագիրը կը ծանուցանէ թէ Սև ծովու հրամանատար Հասան փաշան իմանալով որ Ռուսիա Կերէն Եալթա (Գըրըմ) 60000 զօրք յանցունել սկսած է , արգիլելու համար այն կողմը զնացեր է քանի մը պատերազմական նաւերով :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննա 31 հոկտ. Աւստրիոյ և Հունգարիոյ նախարարք Խորհուրդը ընելով Գերմանիոյ հետ կընքուելիք առևտրական դաշնագրութեան վրայ համաձայնեցան : Անտարսի կոման ապահովիչ բացատրութիւններ տուաւ Գերմանիոյ ընտան դրիք վրայ , որ Աւստրո-Հունգարիոյ դէմ թշնամական դժգոհութիւն չունի :

Վիէննա 31 հոկտ. Ռուսիա մեր գործարանէն հրացան ստանալու յանձնարարութիւնն ետ առաւ :

Փարիզ 31 հոկտ. Նոր նախարարութեան կազմութիւնը նոյեմբեր 7 ին պիտի ծանուցուի պաշտօնապէս :

Բեղրուդուրի 31 հոկտ. Կոստանդնուք թղթակցաւ : 1,100,000 ռուպլի աւելցաւ : Պուլղարի մէջ վճարական դործողութիւն մը կատարուելէ ետեւ կայսրը Բեղրուդուրի պիտի վերադառնայ :

Վիէննա 31 հոկտ. Լորտ Տէրպի ծանուցադրել մը զրկելով Պ. Թրեքուրի կը յայտնէ թէ Անգլիա Ռուսաստանի զինական պատրաստութեանց վրայ տրուած բացատրութիւններէն դո՛հ եղաւ : Լորտ Տէրպի կը յորդորէ Հելլենական կառավարութիւնն յարատեւել իւր խաղաղական դիտարկութեանց մէջ և չեղող պետութեան մը պարտականութիւնները ճշդիւ կատարել :

Փարիզ 1 նոյ. Թան լրագիրը Վիէննայէն հետեւեալ հեռագիրը կը հրատարակէ : « Պէրլինի Ռուսական դեսպան Պ. Տիւպուրի Կորնի-Շիլուան կուլեցաւ : Այս իւրաքանչիւր մեծ տպաւորութիւն ըրաւ : Կը կարծուի թէ Գերմանիա խաղաղական : Ինչորդութիւն մ'ընելու միտք ունենալով , Ռուսիա ալ զիւրացնել կուզէ : զայն : » Արքիթի փաշան այս առաւօտ Փարիզ հասաւ :

Սթէնք 1 նոյ. Թագաւորը Թեքէն Սթէնք վերադարձաւ այսօր : Գունդ մը զօրք Սթէնք կուգան՝ վերջին օրերս եկած Գրուրի թնդանութեանը տանելու :

Վաշա մը հետեւադուր զրկուեցաւ Գաղիս , հոն եկած Կրասի հրացաններն ստանալու :

Պէրլին 2 նոյ. Պ. Տիւպուրի Կորնի-Շիլուան կուլեւիլ սխալ է , այլ իւր հիւանդ մայրը տեսնելու համար Պատէն դնաց , ուր մէկ երկու օր կենացէ ետեւ Պէրլին պիտի վերադառնայ :

Լոնտոն 2 նոյ. Թայմզ հեռագիր մը կը հրատարակէ Պէրլինն ծանուցանող թէ Անգլիա հաշտարար միջնորդութեան մը համար առկայութեանց միտքը կը գնէ :

Լոնտոն 2 նոյ	
Օսմ. Գոնա .	40 1/16
Փոլս .	1863 40 1/2
•	1869 40 1/8
•	1871 36 3/4
•	1872 18
•	1873 10
• Եզրկաւ .	33 3/4
Անգլ. Գոնա	96 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս Անգլիական դեսպան Պ. Լէյարտ հիւնդարթի օրը Բ. Դուռն երթալով՝ երկար տեսակցութիւն մ'ըրաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ :

Իրիկունն ալ նախարարաց ժողով դումարեցաւ Մեծ-Եպարքոսին ապարանքը :

Դանուբեան բանակին հրամանատար Սիւլէյման փաշային բանակի օգնական Եուսուֆ պէյ չորեքշաբթի օրը Կ. Պոլսի եկաւ հարը հինգ ռուս դերի բերելով , որք Դանուբի եզերքը տրուած վերջին կռուոյ մէջ բռնուած են : Եուսուֆ պէյին հետ Տաղատանցի իսլամ մ'ալ կայ Միթթալէտին անուն , որ վերջին օրերս Ռուսաց բանակէն Օսմանեան բանակը վախեր ապաստանել է :

Նոյն գիշերն Ագրիանուպոլսոյ երկաթուղիով 150 պուլղար դասապարտեալք բերուելով՝ ստակիանութեան բանար դրուեցան :

Թուրք լրագիրը կը ծանուցանեն թէ Ագրիանուպոլսոյ նախարդ Կառավարիչ (Միլիթէտարք) Սուրուրի էֆէնտին Սերտախայ կուսակալ տեղապահ անուանեցաւ :

Պատերէթ լրագիրը կրէ թէ ռուս դերիներն իրենց ստորագրութեան համեմատ թոշակ և նպար կ'ստանան : Հասարակ զինուորներն իրենց օրական պարէնէն զատ չորս զըշ ալ դրամ կ'առնուն :

Բ. Դուռն մայրաքաղաքիս քաղաքատնութեան առաջարկութեամբ Բուսթիլի դաւառներէն Կ. Պոլսի արմատիք բերելու արգիւլքը վերցուց , 'ի բաց առեալ վառնայի նաւահանգիստն , ուր արգիւլքը պիտի շարուանակէ Շուսուի կայսերական զօրաց պիտոյիցն համար :

Վահ. Սուրբանին ներկայացնալ

տեղեկագրէ մը կիմացուի թէ զինուորական ծախսոյ նպատակ յանձնաժողովին զրկուած նպատակ դումարը մինչև սեպտեմբերի վերջը 36 միլիոն 724,957 զըշի հասած է , որոյ 40 միլիոն 724,957 զըշն Սպարապետի դէրան տրուեր է , մնացեալն ալ ծովան յին դործոց և թնդանութեան վերատեսչութեանց :

Կըսուի թէ Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախարդ նախագահ Կլարնթ զօրավարն՝ որ քանի մ'աման 'ի վեր իւր դատար հետ Եւրոպա կը պտըտի , մօտ օրերս Կ. Պոլսի պիտի գայ :

Պուլղարիոյ դրաւեալ քաղաքներէն ու դերիներէն փախող և Բուսթիլի այլ և այլ քաղաքներն ապաստանող իսլամ , Պուլղար և Հրեայ բնակչաց թիւն է :

Ագրիանուպոլսոյ մէջ 10000 իսլամ , 2000 Հրեայ և 400 Պուլղար , Շուսուի մէջ 6000 , Ֆիլիպէի մէջ 3000 , Թաթար—Պաղարճըքի մէջ 3000 , ուրիշ այլ և այլ տեղեր ալ 7600 : Ագրիանուպոլսոյ մէջ կայսերական կառավարութիւնն օրն 100 իւրաց կուտայ , որ մի միայն հաց դնելու և դաղթականաց ռաշխելու կը գործածուի :

Մայրաքաղաքիս անգլիական հիւպատոս Պ. Ֆրիլէթ ալ 1500 իւրացն աւելի ծախք ըրած է թաթար—Բաղարճըքի և շրջակայից թշուառ դաղթականներուն օգնութեան համար : Պ. Ֆրիլէթ անգլիացին ալ 500 իւրատարեր է Գըշախլըք և Ֆիլիպէ ապաստանելոց համար :

Լէվրէթ Հէրալտ լրագիրն երկուշաբթի օրը Գեր. Հասունեանին բնակարանը դումարուած ժողովին վրայ հետեւեալ նոր տեղեկութիւնները կը հրատարակէ իւր երէկ իրիկունն թուով :

« Գեր. Հասունեանի տունը դումարեալ ժողովը միմիայն իւր կուսակիցներէն բաղկացեալ էր . Հակահասունեանք կամ Գիւրէլեանք ներկայ չէին այս դումարման , ուր Գեր. Հասունեանի նոր ձեռնադրած եպիսկոպոսներուն պէտք եղած առաջնորդական Պէռաթի խնդրոյն՝ ինչպէս նաեւ Հայ-Կաթոլիկ հասարակութեան երկու պառակտաւ մասերն համաձայնելու պատահութեան և պայմաններուն վրայ խորհուրդ եղաւ : Ստոյգ կերևի որ արատքին գործոց նախարարն ինք խրատ տուեր է Գեր. Հասունեանի օր այդ իրաւախօսութիւնն ընէ , երբոր Գեր. Հասունեան իւր նոր ձեռնադրած չորս եպիսկոպոսաց համար Պէռաթ խնդրեր էր Բ. Դուռնէն : Վսեմ. Սերվէր փաշան պատասխաներ էր թէ Պէռաթները միմիայն Բ. Դուռնէն ճանչուած Պատրիարքին խնդրանքը կրնան տրուել :

« Ասոր վրայ Գեր. Հասունեան փորձ փորձեր է Գաղիոյ դեսպանին միջնորդութեամբն ստանալ Պէռաթներն , և երբոր չէ յաջողութիւն , Գեր. Գիւրէլեան Պատրիարքին այցելութեան դնացեր է իսպառնք , և գործընտան հետ կարգադրել ու գերէ առանձնակի : Բայց Գեր. Գիւրէլեան դիտողութիւն ըրեր է թէ առանց աղագային ժողովոյ և Բ. Դուռն հաւանութեան չկրնար բան մ'ընել : Գաւնի մ'օր ետքը՝ Գեր. Գիւրէլեան արտաքին գործոց պաշտօնատան և աղագային ժողովը հետ խորհրդակցելով պատասխան տուեր է չորս եպիսկոպոսաց՝ որ եթէ Պէռաթի համար իրեն խնդրագիր մատուցանեն , ինք ալ զանոնք Բ. Դուռն հաղորդելով կըրնան Պէռաթն ստանալ : Այդ խնդր-

իոյ Բէրլէմսէ բազարի մօտ Գլազստի
 Լիազօր գործակաւոր
 Վ. Բ. ՍՈՒՍՆ